

« 08 » հունիս 2022թ.

No 2428 - Ա

«ՄԵ-ԳԱ» ախտահանիչ միջոցի (մաշկային հականեխիչի) կիրառման հրահանգը  
հաստատելու մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

#### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «ՄԵ-ԳԱ» ախտահանիչ միջոցի (մաշկային հականեխիչի) կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ հրամանը տեղադրել առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված  
ՀՀ առողջապահության նախարարի  
2022 թվականի հունիս « 08 » - ի  
թիվ 2428 - Ա հրամանի

## ՀՐԱՀԱՆԳ

### «ՄԵ-ԳԱ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ (ՄԱՇԿԱՅԻՆ ՀԱԿԱՆԵԽԻՉԻ) ԿԻՐԱՌՄԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՄԵ-ԳԱ» ախտահանիչ միջոցը (մաշկային հականեխիչը) (այսուհետ՝ միջոց) նախատեսված է ձեռքերի հիգիենիկ մշակման համար.
  - 1) Ցանկացած ուղղվածության բժշկական կազմակերպությունների բուժանձնակազմի, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության աշխատակիցների, արտակարգ իրավիճակների գոտում, սանթողարաններում,
  - 2) Լաբորատորիաների (այդ թվում՝ մանրէաբանական, վիրուսաբանական, իմունաբանական, կլինիկական և այլ), դեղատների և դեղատնային կազմակերպությունների աշխատակիցների,
  - 3) Կրթական գործունեություն իրականացնող մանկական հաստատությունների, սոցիալական ծառայություն իրականացնող կազմակերպությունների (տարեցների, հաշմանդամների տուն և այլն), առողջարանա-կուրորտային, ռազմական և քրեակատարողական հիմնարկների բուժաշխատողների,
  - 4) Օձանելիքա-կոսմետիկական, քիմիա-դեղագործական, կենսատեխնոլոգիական և մանրէաբանական կազմակերպությունների աշխատակիցների,
  - 5) Սպասարկման և հանրային-սոցիալական ոլորտի օբյեկտների (այդ թվում վարսավիրանոցների և կոսմետոլոգիական սրահների), հյուրանոցների, կրթական հաստատությունների, մշակույթի, սպորտի, հանգստի կազմակերպությունների աշխատակիցների,

6) Սննդի արդյունաբերության, հանրային սննդի և առևտրի բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատակիցների (այդ թվում՝ գանձապահների և թղթադրամներով աշխատող այլ անձանց),

7) Մեծահասակ բնակչության կողմից կենցաղում, հանրային վայրերում, տրանսպորտում օգտագործման համար:

2. Միջոցն իրենից ներկայացնում է կիրառման համար պատրաստ, համասեռ հեղուկի տեսքով, առանց կողմնակի ներառումների, սպիրտի և բաղադրության մեջ նշված օգտագործվող բուրանյութի թույլ հոտով լուծույթ: Որպես ազդող նյութ՝ միջոցը պարունակում է էթիլ սպիրտ 52,21 %, պրոպիլ սպիրտ՝ 20 %, ինչպես նաև տարբեր ֆունկցիոնալ բաղադրիչներ: Միջոցի ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը (pH)՝ 5,0 - 8,0 միավոր pH է:

3. Միջոցի պիտանելիության ժամկետը 3 տարի է՝ պատրաստման օրվանից, արտադրողի չբացված փաթեթավորմամբ:

4. Միջոցը թողարկվում է սերտ պարուրափակվող կափույրներով 0,5 և 1,0 լ տարողությամբ պոլիմերային սրվակներում: Սպառողի համաձայնությամբ թույլատրվում է կիրառել տարբեր տարողությամբ, արտադրանքի անվնասությունն ապահովող և արտադրողի նորմատիվ փաստաթղթավորմամբ սպառողական տարայի այլ տեսակներ:

5. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական (ներառյալ տուբերկուլոզի միկոբակտերիաները, թեստավորված *Mycobacterium terrae*-ի վրա) մանրէների, Կանդիդա և Տրիխոֆիտոն ցեղի սնկերի, արտաընդերային հեպատիտների հարուցիչ Բ, Ց, Դ վիրուսների, ՄԻԱՎ վարակի, կորոնավիրուսային հիվանդության, հերպեսի վիրուսի, ցիտոմեգալովիրուսի, գրիպի վիրուսի, այդ թվում՝ A տեսակի, ներառյալ՝ A H5N1, A H1N1, պարագրիպի, ադենովիրուսային վարակի և ՄՇՎՎ այլ հարուցիչների, ռոտավիրուսային վարակի, նորովիրուսային վարակի հարուցիչ վիրուսների նկատմամբ:

6. Միջոցը, ըստ սուր թունավորության չափանիշների, ստամոքս ներմուծելիս և մաշկի վրա լցվելիս, ԳՕՍՏ 12.1.007-76 –ին համապատասխան, պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին, օժտված չէ մաշկի համար գրգռիչ ազդեցությամբ, առաջացնում է աչքի լորձաթաղանթի չափավոր գրգռվածություն, մաշկային-

ռեզորվույթի և գերզգայունացնող հատկություններն արտահայտված չեն, հագեցած խտություններով (միջոցի գոլորշիներ) պատկանում է բարձր վտանգավոր նյութերի 2-րդ դասին՝ ըստ ցնդելիության աստիճանի քիմիական նյութերի դասակարգման:

7. ՍԹԻՆ-ն (սահմանային թույլատրելի խտությունը) աշխատանքային գոտու օդում՝

1) էթիլ սպիրտի համար՝ 1000 մգ/մ<sup>3</sup> է (գոլորշի, վտանգավորության 4-րդ դաս),

2) պրոպիլ սպիրտի համար՝ 10 մգ/մ<sup>3</sup> է (գոլորշի, վտանգավորության 3-րդ դաս):

## 2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ

8. Ձեռքերի հիգիենիկ մշակում. դաստակների չոր մաշկի վրա (առանց ջրով և օճառով նախնական լվացման) լցնում են առնվազն 3 մլ միջոց և ներմերսում մաշկին, մինչև ամբողջությամբ չորանալը, սակայն առնվազն 30 վայրկյան, հատուկ ուշադրություն դարձնելով մատների ծայրերի և միջմատնային հատվածների վրա:

## 3. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

9. Միջոցն օգտագործվում է միայն ըստ նշանակության, կիրառման հրահանգին համապատասխան և միայն արտաքին կիրառման համար:

10. Միջոցը չօգտագործել պիտանելիության ժամկետն սպառվելուց հետո:

11. Չմշակել վերքերը և աչքի լորձաթաղանթները:

12. Չլցնել քիմիական նյութերի նկատմամբ բարձր զգայունություն ունեցող անձանց մաշկի վրա:

13. Խուսափել միջոցն աչքերի մեջ լցվելուց:

14. Միջոցը հրդեհավտանգ է:

15. Փաթեթը պահվում է սերտ փակ վիճակում, տաքացուցիչ սարքերից և բաց կրակից հեռու, դեղերից և սննդամթերքից առանձին, երեխաների համար անհասանելի տեղերում:

## 4. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

16. Աչքերի մեջ միջոցի պատահական լցվելու ժամանակ անմիջապես դրանք լվանալ առատ ջրի շիթով 10-15 րոպե և կաթեցնել նատրիումի սուլֆացիլի 20%-ոց լուծույթ: Անհրաժեշտության դեպքում դիմել ակնաբույժի:

17. Պատահական կուլ տալու ժամանակ խմել սենյակային ջերմաստիճանի մի քանի բաժակ ջուր և առաջացնել փսխում: Այնուհետև խմել մեկ բաժակ ջուր՝ սորբենտի ավելացմամբ (օրինակ՝ ակտիվացված ածուխի 10-15 մանրացված): Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

18. Շնչառական օրգանների գրգռվածության ժամանակ դուրս գալ մաքուր օդի կամ լավ օդափոխվող սենք: Քիթըմպանը ողողել ջրով, խմել տաք ըմպելիք: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

## 5. ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀՈՒՄ

19. Միջոցը պահվում է արտադրողի հերմետիկ փակ փաթեթավորմամբ, փակ, լավ օդափոխվող պահեստային սենքերում, պլյուս 5°C-ից մինչև պլյուս 30°C ջերմաստիճանում, բռնկվող միջոցների պահման կանոններին համապատասխան: Միջոցը հրդեհավտանգ է:

20. Վթարային իրավիճակում միջոցի մեծ քանակության պատահական արտահոսքի ժամանակ վրան լցնում են ցանկացած ներծծող նյութ (ավազ, սիլիկագել կամ այլ չայրվող նյութ), հավաքում և ուղարկում են հետագա օգտահանման: Աշխատանքներն իրականացնում են կոմբինեզոնով կամ խալաթով, ճոքակոշիկներով, հերմետիկ ակնոցով, «A» մակնիշի պատրոնով PY 60M կամ PПГ-67 տեսակի ունիվերսալ շնչադիմակներով, անջրաթափանց ձեռնոցով:

21. Միջոցի տեղափոխումն իրականացվում է ցամաքային տրանսպորտի բոլոր տեսակներով, տրանսպորտի տվյալ տեսակի համար գործող և միջոցի ու տարայի անվնասությունը երաշխավորող բեռների տեղափոխման կանոններին համապատասխան:

22. Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումներ. չնոսրացված վիճակով չլցնել ստորգետնյա, մակերեսային ջրերի, կեղտաջրերի, կոյուղու մեջ: